Արձանագրություն

«ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասում պաշարների վերագնահատման համար օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ» նախատեսվող գործունեության վերաբերյալ անցկացված հանրային լսման

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշման (այսուհետ՝ նաև Կառավարության որոշում) պահանջները՝ 2024 թվականի հուլիսի 8-ին ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ հանրային լսում «Մասիս Փլանթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասում պաշարների վերագնահատման համար օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ» նախատեսվող գործունեության վերաբերյալ (այսուհետ՝ նաև Հանրային լսում):

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- Հանրային լսման վարող ՀՀ, Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի ղեկավարի ներկայացուցիչ՝ ՀՀ, Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավար Յուրիկ Շավելյանը.
- Նախատեսվող գործունեության նախաձեռնող «Մասիս Փլանթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն կամ Նախաձեռնող) ներկայացուցիչներ Անահիտ Եսայանը, Արկադի Մուխսի-Հովեյանը, Արտակ Տեր-Թորոսյանը, Դավիդ Մարաշեկը, Իրինա Սվոբոդովան.
- Հասարակական կազմակեպությունների ներկայացուցիչներ և ազդակիր համայնքի բնակիչներ.
- Լրատվամիջոցների ներկայացուցիչներ.

(մասնակիցների ցանկը կցվում է սույն արձանագրությանը):

Հանրային լսումը վարեց ՀՀ, Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի ղեկավարի ներկայացուցիչ՝ ՀՀ, Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավար Յուրիկ Շավելյանը:

Հանրային լսման ընթացքում հնչեցված ելույթները, դիտողությունները, առաջարկությունները, հարցերը և պատասխանները:

Բացման խոսքով հանդես եկավ Յու. Շավելյանը՝ ներկայացնելով հանդիպման նպատակը, օրակարգը և խոսքը փոխանցեց Ընկերության ներկայացուցիչ Անահիտ Եսայանին:

Ա. Եսայանը հայտնեց, որ հանրային լսումը կազմակերպվել է «Մասիս Փլանթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասում պաշարների վերագնահատման համար օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ» նախատեսվող գործունեության վերաբերյալ՝ «Առավոտ» օրաթերթում և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի պաշտոնական կայքում հրապարակված հայտարարության համաձայն և խոսքը փոխանցեց ընկերության երկրաբանական հարցերով խորհրդատու Արկադի Մուխսի-Հովեյանին:

Ա. Մուխսի-Հովեյանը հակիրճ ներկարայացրեց երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը: Նա նշեց, որ հայցվող տարածքը Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասն է, որի ուսումնասիրությունը սկսվել է դեռևս Սովետական Միության տարիներին և իրականացվել է տարբեր փուլերով: Վերջին անգամ «ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերությունն է իրականացրել ուսումնասիրության աշխատանքներ, հաշվարկվել են պաշարներ, հաստատվել են մոտ 1,6 տոննա ոսկու և 3 տոննա արծաթի պաշարներ: Ընկերության նպատակն է կատարել երկրաբանական-վերագնահատողական աշխատանքներ՝ հանքավայրի տարածքում C1 և C2 կարգի պաշարներ ունենալու համար: Նախատեսվում է կատարվել մոտ 0,8 մետր լայնությամբ և 1,5 մետր խորությամբ փորվածքներ, որոնցով պետք է ուսումնասիրվեն հանքային մարմինները: Անցկացվելու են հորատանցքեր, որոնց նպատակն է ուսումնասիրել հանքային մարմինները խորը հորիզոններում: Այդ աշխատանքներին զուգընթաց կատարվելու են փաստագրման և նմուշարկման աշխատանքներ, որպեսզի հասկանալի լինի հանքային մարմնում օգտակար կոմպոնենտների պարունակությունը, ինչպես նաև առանձնացնել նմուշներ, որոնցով կորոշվեն օգտակար կոմպոնենտների կորզման ամենաարդյունավետ սխեմաները: Աշխատանքների արդյունքում նախատեսվում է կազմել երկրաբանական պաշարների հաշվարկման հաշվետվություն, տեխնիկա-տնտեսական հիմնավորում, որն էլ կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հաստատման:

Այնուհետև Ա. Մուխսի-Հովեյանը խոսքը փոխանցեց Արտակ Տեր-Թորոսյանին՝ նախատեսվող գործունեության բնապահպանական մասով կատարվելիք աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար:

Արտակ Տեր-Թորոսյանը ներկայացրեց, որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները որոշակի ազդեցություն են ունենալու շրջակա միջավայրի վրա, և Ընկերությունը պետք է անհրաժեշտ միջոցառումներ իրականացնի՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման արդյունքում համապատասխան տարածքներն իրենց նախնական տեսքին բերելու ուղղությամբ: Այս փուլում բնապահպանական գնահատման իմաստը կայանում է նրանում, որպեսզի նախատեսվեն և ձեռնարկվեն այնպիսի գործողություններ, որ հորատանցքերի հորատման արդյունքում տարածքը վերականգնվի իր նախկին վիճակին:

Միաժամանակ, դիմելով ներկաներին, առաջարկեց հնչեցնել իրենց կարծիքներն ու առաջարկությունները, որպեսզի Ընկերությունը դրանք հաշվի առնի հետագա գործողությունների կազմակերպման ընթացքում:

Համայնքի բնակիչներից մեկը մտահոգություն հայտնեց աշխատանքների կատարման արդյունքում առաջացող փոշու վերաբերյալ:

Ա. Տեր-Թորոսյանը պատասխանեց, որ հաջորդ փուլում Ընկերությունը կներկայացնի այն միջոցառումների շրջանակը, որոնք պետք է իրականացվեն հորատման ընթացքում առաջացող փոշու քանակը հնարավորինս նվազեցնելու ուղղությամբ:

Յու. Շավելյանը հարց ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին, թե արդյոք արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են թունելային եղանակով, թե՝ բաց:

Ա. Մուխսի-Հովեյանը պատասխանեց, որ այս փուլում դեռևս նախատեսվում է իրականացնել ուսումնասիրության աշխատանքներ՝ պաշարների վերագնահատման նպատակով, ուստի դեռ վաղ է խոսել օգտակար հանածոյի արդյունահանման եղանակների մասին: Պաշարների վերագնահատումից հետո կներկայացվի նոր ծրագիր արդյունահանման իրականացման վերաբերյալ, որի շրջանակներում կներկայացվի արդյունահանման եղանակների վերաբերյալ տեղեկատվություն: Սույն փուլի նպատակն է պարզել, թե ինչ պաշարներ կան ընդերքում, և արդյոք տնտեսապես շահավետ է արդյունահանում իրականացնելը: Այսինքն, այս փուլում իրականացվելու է միայն ուսումնասիրություն:

Բնակիչների կողմից հարց բարձրացվեց, թե արդյոք նախկինում Քարաբերդի հանքավայրը շահագործող ընկերությունը և «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունը նույն ընկերություններն են:

Ա. Մուխսի-Հովեյանը պատասխանեց, որ նախորդ շահագործող ընկերության արդյունահանման թույլտվության ժամկետն ավարտված է, ուստի «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունը նոր աշխատանքներ է նախաձեռնում իրականացնել տվյալ տարածաշրջանում:

Ա. Եսայանը հավելեց, որ «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերության մասնակից ընկերությունը չեխական ընկերություն է, որի իրական շահառուները Չեխիայի Հանրապետության քաղաքացիներ են, և որոնց վերաբերյալ տեղեկատվությունն առկա է համապատասխան էլեկտրոնային ռեգիստրում:

Համայնքի բնակիչներից մեկը երկու հարց բարձրացրեց, թե արդյոք Ընկերությունը չի կարող հետագայի համար որոշել և իրականացնել հանքի բաց շահագործում: Միաժամանակ, հայտնեց, որ հանքը շահագործող նախորդ ընկերության հետ համայնքն ունեցել է պայմանավորվածություններ, որոնց համաձայն ընկերությունը ֆինանսական օժանդակություն է իրականացրել Փամբակ համայնքին՝ համայնքային նշանակության հարցերի լուծման համար, և արդյոք «Մասի Փլանթ» ՍՊ ընկերությունը շարունակելու է այդ ֆինանսական օժանդակության ծրագրերը:

Առաջին հարցին անդրադարձավ Ա. Մուխսի-Հովեյանը՝ նշելով, որ այս փուլում դեռևս իրականացվելու են երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, և միայն դրանց դրական արդյունքների առկայությունից հետո Ընկերությունը կնախատեսի նոր ծրագիր՝ արդյունահանման աշխատանքների իրականացման եղանակների վերաբերյալ, որի մասով նույնպես հանրային լսումներ են իրականացվելու: Ուստի առանց համայնքի մասնակցության չի իրականացվելու որևէ գործողություն:

Հնչեցված երկրորդ հարցին պատասխանեց Ա. Եսայանը, ով նշեց, որ «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունը պլանավորում է ընդգրկվել չեխական ընկերությունների խմբի կազմում, որում ընդգրկված է նաև «ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության մասնակից ընկերությունը, որի մասնակից ընկերությունն էլ Լոնդոնի բորսայում ցուցակված ընկերություն է, ուստի «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում սոցիալական ծրագրերի իրականացման առումով իր աջակցությունը ցուցաբերել համայնքին:

Բնակիչներից մեկը հստակեցրեց, թե արդյոք «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունը «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի իրավահաջորդն է և շարունակելու է իրականացնել «ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության ստանձնած սոցիալական պարտավորությունները համայնքի առջև:

Ա. Եսայանը նշեց, որ «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունը «ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության իրավահաջորդը չէ, սակայն պատրաստակամ է շարունակել ինչպես «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի կողմից իրագործման փուլում գտնվող, այնպես էլ ապագայում իրականացվելիք սոցիալական աջակցության ծրագրերը:

Բնապահպանական համայնքի ներկայացուցչի կողմից հարց հնչեցվեց, թե ինչու է հանրային լսումն իրականացվում միայն Քարաբերդ համայնքում, ինչու ոչ Վանաձորում և ոչ Գուգարքում, քանի որ տարածքային առումով դրանք մոտ են հանքավայրին:

Ա. Տեր-Թորոսյանը պատասխանեց, որ օրենքի համաձայն որ համայնքի վարչական տարածքում գտնվում է հանքավայրը, այդ համայնքն էլ համարվում է ազդակիր համայնք և լսումն իրականացվում է համապատասխան համայնքում:

Բնապահպանական համայնքի ներկայացուցիչը հակադարձեց, որ ինքը գիտի դեպքեր, երբ հանրային լսումներն իրականացվել են մի քանի համայնքներում:

Ա. Տեր-Թորոսյանը պատասխանեց, որ հավանաբար տվյալ դեպքերում մի քանի ազդակիր բնակավայրեր են եղել, այսինքն տվյալ հանքավայրի տարածքն ընդգրկված է եղել մի քանի համայնքների վարչական տարածքներում: Տվյալ պարագայում ազդակիր բնակավայրը Քարաբերդն է:

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչը հայտնեց, որ նախորդ տարի այդ նույն համայնքում ներկայացվել է իրենց ՀԿ-ի և չեխական կազմակերպության համատեղ իրականացված աշխատանքները՝ հանքարդյունահանման արդյունքում մարդու առողջությանը հասցված վնասների մասին: Այդ համատեքստում վերջինս հարց հնչեցրեց, որ եթե վերագնահատման արդյունքում որոշվի հանքարդյունահանում իրականացնել, ինչ մեխանիզմներ են նախատեսվում իրականացվել՝ Ընկերության կողմից բնությանը և մարդկանց առողջությանը հասցվող վնասները նվազեցնելու ուղղությամբ:

Ա. Մուխսի-Հովեյանը պատասխանեց, որ այս փուլում նման միջոցառումներ ներկայացնելը դեռ վաղ է, նշված գործողություններն իրականացվելու են հաջորդիվ, քանի որ խոսքը գնում է դեռևս ուսումնասիրություն իրականացնելու մասին: Ընկերությունը երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմանն ուղղված գործողությունները պարտավոր է իրականացնել օրենքով սահմանված կարգով:

ՀԿ-ի ներկայացուցիչը հակադարձեց, որ քանի որ «Մասիս Փլանթ» ՍՊ ընկերությունը չեխական ընկերությունների խմբի անդամ է, որի անդամ է նաև «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ն, հետևաբար «Մասի Փլանթ» ՍՊԸ-ի համար պետք է ակնհայտ լինի, որ օգտակար հանածոյի արդյունահանում իրականացվելու է:

Ա. Մուխսի-Հովեյանը պատասխանեց, որ հաստատված պաշարների հավաստիությունը տվյալ պահին կասկած է առաջացնում, ուստի լրացուցիչ ուսումնասիրություն իրականացնելու անհրաժեշտություն կա: Միայն լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում հաստատված պաշարների վերաբերյալ հստակ տեղեկատվության առկայության դեպքում կնախատեսվի շահագործում: Նշված հարցն իր բոլոր բաղադրիչներով վերաբերում է հաջորդ փուլերում նախատեսվելիք գործողություններին:

Խոսքով հանդես եկավ Ընկերության ներկայացուցիչ Իրինա Սվոբոդովան, ով հայտնեց, որ Ընկերությունը պլանավորում է իր գործունեությունն իրականացնել «կանաչ» էկոլոգիապես մաքուր մեթոդով՝ բնությանը հնարավորինս քիչ վնաս պատճառելու համար:

Միաժամանակ, ներկայացրեց չեխական ընկերությունների խմբի ներկայացուցիչ Դավիթ Մարաշեկին և խոսքը փոխանցեց վերջինիս՝ էկոլոգիապես մաքուր մեթոդի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն տրամադրելու համար (Դավիթ Մարաշեկի խոսքը հնչում է ռուսերեն, որը ներկաների պահանջով Իրինա Սվոբոդովայի կողմից զուգահեռ թարգմանվում է հայերեն):

ՀԿ-ի ներկայացուցիչը պնդեց, որ «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի գործունեության տարիներին վնաս է հասցվել բնությանն ու մարդկանց առողջությանը:

Ի. Սվոբոդովան էլ նշեց, որ հենց այդ վնասները կանխելու համար էլ չեխական ընկերությունները փորձում են կիրառել այդ էկոլոգիապես մաքուր մեթոդը:

Դավիթ Մարաշեկը շնորհակալություն հայտնեց ներկաներին հանրային լսմանը մասնակցելու համար, հակիրճ ներկայացրեց չեխական ընկերությունների խմբի անդամ ընկերությունների գործունեությունը Հայաստանում՝ նշելով, որ 2019 թվականից ի վեր իրենք համակգործակցում են Չինաստանի պետական երկրաբանական ընկերության հետ՝ առանց ցիանիդի ոսկու կորզում իրականացնելու ուղղությամբ և ներկայացրեց մանրամասնություններ:

Ի. Սվոբոդովան հավելեց, որ այդ ամենի արդյունքում նաև նոր աշխատատեղեր են բացվելու, ինչի կարիքը որ ունի նաև համայնքը:

ՀԿ-ի ներկայացուցիչը իր դժգոհությունը հայտնեց Թեղուտի հանքավայրի վերաբերյալ՝ փորձելով համեմատական անցկացնել Քարաբերդի հանքավայրի հետ,

Ա. Մուխսի-Հովեյանը հակադարձեց՝ նշելով, որ որ Թեղուտում դժգոհություն է առաջացել հենց հանքավայրում աշխատանքների դադարեցման համար:

Յու. Շավելյանը խոսք խնդրեց՝ նշելով, որ ինքն՝ այդ համայնքի երկարամյա բնակիչ է, չի բողոքում իր առողջությունից և պնդեց, որ հանքավայրի շահագործման արդյունքում բնակչությունը վնաս չի կրել: Ավելին, համայնքն այդ հանքավայրի շահագործման կարիքն ունի՝ միայն թե արդյունահանումն իրականացվի փակ եղանակով:

ՀԿ-ի ներկայացուցիչը շարունակեց իր խոսքը՝ հղում տալով չեխական «Առնիկա» ընկերության կողմից կատարված հետազոտությանը, որով ներկայացվում են տվյալ տարածաշրջանի կրած բնապահպանական և մարդկանց առողջությանը պատճառված վնասները:

Համայնքի բնակիչներից մեկը բանավեճի բռնվեց ՀԿ-ի ներկայացուցչի հետ՝ նշելով, որ բնակիչները ցանկանում են, որ հանքավայրը շահագործվի և համայնքում աշխատատեղեր բացվեն: Միաժամանակ մեղադրեց ՀԿ-ի ներկայացուցչին Ընկերության գործունեությունը անհարկի բացասական լույսի ներքո ներկայացնելու փորձ անելու մեջ:

Համայնքի բնակիչներից մեկը շնորհակալություն հայտնեց համայնքին ցուցաբերած աջակցության համար:

Բնակիչներից մեկն էլ կարծիք հայտնեց, որ անհրաժեշտ է Ընկերությանը հնարավորություն տալ գործունեություն իրականացնել, որի ընթացքը հետագայում փորձել վերահսկել:

Ա. Մուխսի-Հովեյանն ու Ա. Տեր-Թորոսյանն էլ հաջորդաբար կրկին փաստեցին, որ երկրաբանական ուսումնասիրությունները համալիր աշխատանքներ են: Եթե աշխատանքների ընթացքում ինչ որ գեոդինամիկ վտանգավոր պրոցեսներ հայտնաբերվեն, դրանց դեմ պայքարի միջոցառումները կներկայացվեն: Նաև հավելեցին, որ կատարվելու է պաշարների վերահաշվարկ, գնահատվելու է հանքավայրի տեխնիկա-տեսական ցուցանիշները, գնահատվելու են ինժենարական բոլոր հարցերը, և եթե նշված խնդիրները լինեն, բնականաբար լուծումներ և տարբերակներ են առաջարկվելու, բայց այդ ամենն իրականացվելու է իր ժամանակին, հաջորդ փուլի ընթացքում:

Բնապահպաններից մեկը հարցրեց, արդյոք սողանքային գոտի կա տեղանքում:

Ա. Մուխսի-Հովեյանը պատասխանեց, որ քանի դեռ ուսումնասիրություն չի կատարվել, հարցին հնարավոր չէ ստույգ պատասխան տալ: Դա կբացահայտվի ուսումնասիրության արդյունքում:

Հաշվի առնելով, որ հարցերը և առաջարկությունները սպառված էին, Յու. Շավելյանը Հանրային լսումը հայտարարեց ավարտված:

Սույն արձանագրությունը կազմված է երեք օրինակից՝ հայերեն:

Ստորագրություններ՝

ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի
ղեկավար Ս. Կոստանդյան

Հանրային լսման վարող՝
ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի
Քարաբերդ բնակավայրի վարչական
Ղեկավար Յու. Շավելյան

Հանրային լսման արձանագրող՝
Փամբակի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար
Ռ. Մինասյան

Նախաձեռնող՝
«Մասիս Փլանթ» ՍՊ ընկերություն
Ներկայացուցիչ Ա. Եսայան